

## ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ

Մաքսանենգությունը, հանդիսանալով առաջադեմ բոլոր պետությունների քրեական օրենքներով ավանդաբար նախատեսվող հանցավոր արարք, վերջին տարիներին բավականին լայն տարածում է ստացել ամբողջ աշխարհում: Ավելին, տարեցտարի առավել զարգանում, արդիականացվում, կատարելագործվում են դրա իրականացման եղանակները: Այդ առումով լուրջ մտահոգության տեղիք է տալիս հատկապես այն առարկաների մաքսանենգության դեպքերի ավելացումը, որոնք հանված են շրջանառությունից կամ, որոնց շրջանառությունը սահմանափակված է: Խոսքը, մասնավորապես, գենքի, ռազմամթերքի, թմրամիջոցների, հոգեներգործող կամ դրանց համարժեք նյութերի, դրանց պրեկուրսորների և մշակութային արժեքների մասին է: Ասվածը վկայում է հանրորեն վտանգավոր վերոհիշյալ արարքների դեմ պայքարի արդյունավետ միջոցների մշակման և կիրառման անհրաժեշտության մասին:

Տնտեսական գործունեության, բնակչության առողջության և հասարակական անվտանգության դեմ ոտնձգող հանրավտանգ վերոհիշյալ արարքների դեմ պայքարի գործում հատկապես կարևորվում են քրեաիրավական ներգործության միջոցները: Ընդ որում, տարբեր երկրներում դրանք յուրովի իրավակարգավորման են ենթարկված, ինչը կախված է տարատեսակ հանգամանքներից՝ պատմականորեն ձևավորված ավանդույթներից, տնտեսության զարգացման աստիճանից, արտաքին առևտրային հարաբերությունների առանձնահատկություններից և այլն:<sup>2</sup> Այդ մասին է վկայում նաև արտասահմանյան մի շարք երկրների քրեական գործող օրենսդրության վերլուծությունը:

---

<sup>1</sup> ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր Ս. Առաքելյան:

<sup>2</sup> Տե՛ս նաև **Прохоров Л. А., Скачко А. В.**, Правовые модели противодействия контрабанде: опыт зарубежного законоотворчества // Общество и право, 2013, № 2 (44), էջ 69-70:

Մասնավորապես, Եվրոպական Միության անդամ որոշ պետություններում մաքսանենգության համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերն ընդգրկում են տվյալ արարքի դրսևորումների բավականին լայն շրջանակ, իսկ մյուսներում՝ քրեորեն պատժելի են համարվում դրանց միայն առավել վտանգավոր տեսակները: Բնականաբար, համապատասխան իրավակարգավորումներն էլ այդ պետություններում տարբեր են:

Քննարկվող հանցագործության համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերն առավել մանրամասն կարգավորում են ստացել, օրինակ՝ Սան-Մարինոյի Հանրապետության քրեական օրենսգրքում: Ընդ որում, տեսակային օբյեկտի առանձնահատկություններով պայմանավորված, դրանք նախատեսված են տվյալ օրենքի տարբեր գլուխներում, որոնք ներառում են՝ 1) տնտեսական գործունեության, 2) հեղինակային և հարակից իրավունքների, 3) հասարակական անվտանգության և 4) բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունները:<sup>1</sup>

Միննույն ժամանակ, «մաքսանենգություն» վերտառությամբ հոդված տվյալ երկրի քրեական օրենսգրքում նախատեսված չէ: Մինչդեռ, բավականին խիստ պատասխանատվություն է սահմանված մաքսանենգ ճանապարհով հանրապետության տարածք բժշկական նպատակներով օգտագործվող նյութերի ներմուծման համար: Այդ արարքը նախատեսված է Սան-Մարինոյի քրեական օրենսգրքի հոդված 242-ով, որի սանկցիայով սահմանված է չորրորդ աստիճանի բանտարկություն՝ 4-10 տարի ժամկետով:

Նույն օրենքի հոդված 244-ի 2-րդ մասի սանկցիայով երկրորդ աստիճանի բանտարկություն է (6 ամսից 3 տարի ժամկետով) սահմանված հանրապետության տարածք այն անձի կողմից թմրանյութեր ներմուծելու համար, ով դրա իրավունքը չունի: Նշված հոդվածի 1-ին մասով առավել խիստ (երրորդ աստիճանի բանտարկություն՝ 2-6 տարի ժամկետով) պատասխանատվություն է սահմանված հանրապետության տարածք այն անձի կողմից թմրանյութեր ապօրինի ներմուծելու համար, ով դրա իրավունքը (հատուկ թույլտվությունը) ուներ, սակայն արարքը կատարել է ներմուծման սահմանված կանոնները դիտավորությամբ խախտելով: Մինչդեռ, նույն օրենքի

---

<sup>1</sup> См. у Уголовный кодекс Республики Сан-Марино, СПб., 2002:

հողված 250-ի սանկցիայով առաջին աստիճանի բանտարկություն է (3 ամսից 1 տարի ժամկետով) սահմանված հանրապետության տարածք թմրանյութեր ներմուծելու կանոններն անզգուշությամբ խախտելու համար: Ընդ որում, առաջին աստիճանի բանտարկություն է սահմանված նաև հողված 251-ի սանկցիայով՝ հանրապետության տարածք զենք, պայթուցիկ կամ դյուրավառ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ապօրինի ներմուծելու համար: Միևնույն ժամանակ, Ման-Մարինոյի քրեական օրենսգրքի հողված 280-ով բավականին խիստ պատասխանատվություն է սահմանված (երրորդ աստիճանի օրատուգանք՝ 20-60 օր տևողությամբ) հանրապետության տարածք ակոհոլային խմիչքներ ապօրինի ներմուծելու համար:

Բացի դրանից, հատուկ ուշադրության է արժանի տվյալ երկրի քրեական օրենսգրքի հողված 388-ը, որը պատասխանատվություն է սահմանում «Պետությանը խաբելու եղանակով սպրանքներ արտադրելու և դրանց մաքսանենգության» համար: Օբյեկտիվ կողմից այս արարքը բնութագրվում է հանրապետության տարածք հարկման ենթակա առարկաներ ներմուծելով, եթե այդ հարկերը չեն մուծվել պետությանը՝ խաբեության հետևանքով: Նկարագրված արարքի համար՝ որպես հիմնական պատիժ, նախատեսված է առաջին աստիճանի բանտարկություն (3 ամսից 1 տարի ժամկետով), իսկ որպես լրացուցիչ՝ քաղաքական իրավունքներից զրկելը և դրամական տուգանքը:

Ման-Մարինոյի Հանրապետության քրեական օրենսգրքով պատասխանատվություն է սահմանված նաև պետության տարածք կեզծ փողեր կամ արժեթղթեր, ինչպես նաև կեղծված ստորագրությամբ վարկային փաստաթղթեր ներմուծելու համար: Տվյալ արարքը նախատեսված է նշված երկրի քր. օր.-ի հողված 401-ով, որի սանկցիան չորրորդ աստիճանի բանտարկությունն է (4-10 տարի ժամկետով):

Այսպիսով, եվրոպական քննարկվող երկրի քրեական օրենսգրքի բազմաթիվ գլուխներում սահմանված են նորմեր, որոնք պատասխանատվություն են նախատեսում մաքսանենգ եղանակով կատարվող հանցավոր տարբեր արարքների համար: Ընդ որում, հատկապես խիստ պատիժներ են սահմանված ոչ թե թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, զենքի, պայթուցիկ նյութերի կամ պայթուցիկ սարքերի, այլ բժշկական նպատակներով օգտագործվող նյութերի, կեղծ փողերի կամ արժեթղթերի, կեղծված ստորագրությամբ վարկային

վիաստաթղթերի մաքսանենգության համար: Կարծում ենք, որ նման մոտեցումն արդարացված չէ, և այս առումով ՀՀ քրեական օրենսգրքում առկա իրավակարգավորումներն առավել նպատակահարմար են: Բացի այդ, դժվար է համաձայնել այն մոտեցմանը, որ քրեական պատասխանատվություն է սահմանված քննարկված հոդվածներում նշված առարկաները միայն ներմուծելու համար: Այսինքն, դրանք արտահանելը հանցագործություն չի համարվում, ինչը ևս, ըստ մեզ, արդարացված չէ:

Մաքսանենգության համար պատասխանատվություն սահմանող նորմերը մանրամասն կարգավորված են նաև Հոլանդիայի քրեական օրենսդրությամբ: Դրանք, ինչպես և Սան-Մարինոյի պարագայում էր, կոչված են ապահովելու բավականին լայն շրջանակ ընդգրկող հասարակական հարաբերությունների (դրամավարկային օրինական շրջանառությունից մինչև բնակչության առողջությունն ու հասարակական անվտանգությունը) քրեաիրավական պաշտպանությունը:<sup>1</sup>

Միննույն ժամանակ, Հոլանդիայի քրեական օրենսգիրքը, ի տարբերություն վերը քննարկված երկրի քրեական օրենսդրության, պարունակում է հատուկ նորմ, որը պատասխանատվություն է սահմանում տնտեսական մաքսանենգության համար: Մասնավորապես, նշված օրենսգրքի հոդված 337-ի համաձայն՝ քրեական պատասխանատվության է (մինչև 1 տարի ժամկետով բանտարկության կամ 5-րդ աստիճանի տուգանքի) ենթակա այն անձը, ով դիտավորությամբ երկրի տարածք է ներմուծում՝ 1) կեղծված կամ ապօրինի արտադրված առևտրային դրոշմանիշներ, 2) ապրանքներ կամ տարա, որոնց վրա նշված են իրականում այլ անձին պատկանող կեղծված ֆիրմային անվանումներ կամ ապրանքային նշաններ, 3) ապրանքներ, որոնց վրա նշված են արտադրության վայրի վերաբերյալ կեղծ տվյալներ և 4) ապրանքներ կամ տարա, որոնք պարունակում են այլ անձին պատկանող ֆիրմային անվանման կամ ապրանքային նշանի ձևացում (իմիտացիա), որքան էլ աննշան այն լինի: Ընդ որում, տվյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ քրեական պատասխանատվություն է սահմանված դրանում նշված առարկաները միայն ներմուծելու համար: Այսինքն, մաքսային սահմանով դրանք մաքսա-

---

<sup>1</sup> St u Уголовный кодекс Голландии, СПб., 2001:

նենգ եղանակով արտահանելը Հոլանդիայի օրենսդրությամբ ևս հանցագործություն չի համարվում, ինչի հետ, ինչպես արդեն նշվել է, դժվար է համաձայնել:

Մաքսանենգ եղանակով կատարվող հանցանքների ավելի նեղ շրջանակ է ընդգրկում Գերմանիայի քրեական օրենսդրությունը: Վերջինս, սակայն, մաքսանենգության վերաբերյալ հատուկ նորմեր է պարունակում: Ընդ որում, դրանք նախատեսված են տվյալ երկրի ոչ միայն քրեական օրենսգրքում, այլև նորմատիվ իրավական այլ ակտերում:<sup>1</sup>

Մասնավորապես, «Հարկերի մասին» 1976 թ. մարտի 16-ի օրենքով նախատեսված է մաքսանենգության համար քրեական պատասխանատվություն սահմանող երկու հանցակազմ՝ հիմնական (հասարակ) և ծանրացնող հանգամանքներով (որակյալ): Հասարակ մաքսանենգությունը նախատեսված է նշված օրենքի § 372-ով, որի համաձայն՝ 1 ամսից մինչև 5 տարի ժամկետով ազատազրկման կամ տուգանքի ձևով պատժի է ենթակա այն անձը, ով, սահմանված արգելքին հակառակ, առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով, որոշակի առարկաներ է ներմուծում, արտահանում կամ տեղափոխում պետության մաքսային սահմանով:

Նույն օրենքի § 373-ի համաձայն՝ մաքսանենգությունն առավել վտանգավոր է, եթե § 372-ով նախատեսված արարքներից որևէ մեկը կատարվում է որպես արհեստ կամ բռնություն գործադրելով կամ բանդայի (**կազմակերպված խմբի** – Գ.Մ.) կազմում՝ հրազեն գործադրելով: Մաքսանենգության նշված դրսևորումների համար, բնականաբար, նախատեսված է առավել խիստ պատասխանատվություն՝ ազատազրկում 3 ամսից մինչև 5 տարի ժամկետով: Այս առումով, սակայն, դժվար է համաձայնել Գերմանիայի օրենսդրի մոտեցմանը: Բանն այն է, որ քննարկվող հանցագործության որակյալ վերոհիշյալ տեսակների համար պատիժը, մեր կարծիքով, պետք է ավելի խիստ լիներ: Մինչդեռ, տվյալ երկրի օրենսդիրը բավարարվել է միայն հիմնական առավել մեղմ պատժից (տուգանքից) հրաժարվելով և ազա-

---

<sup>1</sup> St' u **Кубанцев С. П.**, Ответственность за контрабанду наркотиков и ряд иных преступлений, связанных с наркотиками, по уголовному законодательству некоторых зарубежных государств // Российское право в Интернете, 2009, № 4:

տազրկման նվազագույն ժամկետն աննշան ավելացնելով, ինչը, կարծում ենք, արդարացված համարվել չի կարող:

Մաքսանենգ եղանակով կատարվող մի շարք հանցանքներ, ինչպես արդեն նշվել է, նախատեսված են նաև Գերմանիայի քրեական օրենսգրքով:<sup>1</sup> Մասնավորապես, դրա § 275-ի («Պաշտոնական փաստաթղթերի կեղծման նախապատրաստումը») 1-ին մասը մինչև 2 տարի ժամկետով ազատազրկման կամ տուգանքի ձևով պատիժ է սահմանում մաքսանենգ ճանապարհով հետևյալ առարկաների ներմուծման կամ արտահանման համար՝ 1) պաշտոնական կեղծ փաստաթղթեր պատրաստելու համար նախատեսված հարմարանքների, սարքավորումների կամ նյութերի, 2) պաշտոնական կեղծ փաստաթղթեր պատրաստելու համար նախատեսված և բնօրինակին նմանվող պաշտպանիչ տարբերանշաններ ունեցող թղթի, 3) պաշտոնական կեղծ փաստաթղթեր պատրաստելու համար նախատեսված ձևաթղթերի: Նույն §-ի 2-րդ մասն առավել խիստ պատասխանատվություն է նախատեսում վերոհիշյալ արարքների համար, որոնք կատարվել են որպես արհեստ կամ տնական հանցավոր գործունեություն իրականացնելու համար ստեղծված բանդայի կազմում: Մասնավորապես, տվյալ արարքը պատժվում է ազատազրկմամբ՝ 3 ամսից մինչև 3 տարի ժամկետով:

Գերմանիայի քր. օր.-ի § 276-ը պատասխանատվություն է սահմանում արդեն կեղծված պաշտոնական փաստաթղթեր ներմուծելու կամ արտահանելու համար: Մասնավորապես, տվյալ արարքի համար՝ որպես պատիժ, նույնպես նախատեսված է մինչև 2 տարի ժամկետով ազատազրկում կամ տուգանք: Նույն §-ի 2-րդ մասը, ինչպես և § 275-ի պարագայում էր, առավել խիստ պատասխանատվություն է նախատեսում (ազատազրկում՝ 3 ամսից մինչև 3 տարի ժամկետով) վերոհիշյալ արարքների համար, որոնք կատարվել են որպես արհեստ կամ բանդայի կազմում: Ընդ որում, Գերմանիայի քր. օր.-ի § 276a-ի համաձայն՝ §-ներ 275-ի և 276-ի իմաստով պաշտոնական փաստաթղթեր են համարվում նաև բնակվելու (կացության) թույլտվությունը, վարորդական վկայականը և տրանսպորտային միջոցի տիրապետման իրավունքը հավաստող փաստաթղթերը:

---

<sup>1</sup> St' u Уголовный кодекс Федеративной Республики Германии, СПб., 2003:

Վերոգրյալից կարելի է հետևություն անել, որ Գերմանիայի քրեական օրենսդրությամբ, փաստորեն, նույնաբնույթ պատասխանատվություն է սահմանված ինչպես պաշտոնական փաստաթղթերի կեղծման նախապատրաստման նպատակով այլ առարկաները, այնպես էլ արդեն իսկ կեղծված փաստաթղթերը ներմուծելու և արտահանելու համար, ինչը, կարծում ենք, արդարացված չէ: Բացի դրանից, տվյալ երկրի քր. օր.-ը, ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի, չի նախատեսում մաքսանենգության ծանրացնող որոշ հանգամանքներ (օրինակ՝ թմրամիջոցների, հոգեմետ և խիստ ներգործող նյութերի կամ պաշտոնատար անձի կողմից՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարված մաքսանենգությունը և այլն), որոնց պարագայում, կարծում ենք, տվյալ արարքի վտանգավորությունն անհամեմատ ավելի բարձրանում է: Ուստի, այս առումով ևս ՀՀ օրենսդրի մոտեցումն առավել արդարացված է:

Շվեյցարիայի քրեական օրենսդրությամբ նախատեսված իրավակարգավորումների առումով հարկ է հատուկ նշել ներկայումս խիստ արդիական մի հանցակազմ, որը պատասխանատվություն է սահմանում երկրի տարածք մարդկանց կամ կենդանիների նկատմամբ դրսևորվող դաժանությունն արտացոլող տարատեսակ առարկաներ (տեսաձայնագրություններ, լուսանկարներ, պատկերներ և այլն) ներմուծելու համար:<sup>1</sup> Մասնավորապես, տվյալ երկրի քր. օր.-ի հոդված 135-ով («Բռնության պատկերումը») նման արարքների կատարումը պատժվում է բանտարկությամբ կամ տուգանքով, իսկ հանցագործության առարկաները ենթակա են բռնագրավման: Նույն հոդվածով նախատեսված է նաև տվյալ հանցագործության առավել վտանգավոր տեսակը՝ արարքը շահադիտական դրդումներով կատարելը, որը նույնպես պատժվում է բանտարկությամբ կամ տուգանքով: Հարկ է նշել նաև, որ տվյալ հանցագործությունը տեղ է գտել Շվեյցարիայի քր. օր.-ի Հատուկ մասի 1-ին բաժնում, որը ներառում է կյանքի և առողջության դեմ ուղղված հանցանքները, ինչը, մեր կարծիքով, առնվազն վիճելի է:

Մինևույն ժամանակ, վերոհիշյալ երկու դեպքում էլ պատժի ժամկետը և չափը որոշում է դատարանը՝ օրենքով նախատեսված սահմաններում: Այսպես, Շվեյցարիայի քր. օր.-ի հոդված 36-ի հա-

<sup>1</sup> St' u Уголовный кодекс Швейцарии. СПб., 2002:

մաձայն՝ բանտարկության նվազագույն ժամկետը 3 օրն է, իսկ առավելագույնը՝ 3 տարին, եթե օրենքով ուղղակիորեն ավելի երկար ժամկետ նախատեսված չէ: Նույն օրենսգրքի հոդված 48-ի համաձայն՝ եթե օրենքով ուղղակիորեն այլ բան նախատեսված չէ, ապա տուգանքի առավելագույն չափը կազմում է շվեյցարական 40 հազար ֆրանկ: Ընդ որում, նույն հոդվածին համապատասխան, եթե հանցավորը գործել է շահադիտական դրդումներով, ապա դատարանը կաշկանդված չէ առավելագույն այդ չափով և կարող է նշանակել ավելի մեծ չափի տուգանք՝ հաշվի առնելով հանցանք կատարած անձի և նրա ընտանիքի գույքային վիճակը:

Շվեյցարիայի քր. օր.-ի հոդված 236-ը, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների շարքում, պատասխանատվություն է սահմանում երկրի տարածք կենդանիների առողջության համար վտանգավոր կերեր կամ կերակրամիջոցներ ներմուծելու համար: Տվյալ արարքի համար՝ որպես պատիժ, նույնպես նախատեսված են բանտարկությունը կամ տուգանքը: Բացի դրանից, նման գործերով դատարանի դատավճիռը, օրենքի համաձայն, ենթակա է հրապարակման:

Նույն օրենսգրքի հոդվածներ 243-ով և 244-ով, փողերի, վճարային այլ միջոցների կեղծման հետ կապված հանցագործությունների շարքում, պատասխանատվություն է սահմանված երկրի տարածք կեղծ մետաղադրամ, թղթադրամ, արժեթուղթ կամ վճարային այլ միջոցներ ներմուծելու համար: Այդ արարքների համար օրենքով նախատեսված առավելագույն պատիժը՝ մինչև 5 տարի ժամկետով բանտարկությունն է:

Այսպիսով, Շվեյցարիայի քրեական օրենսդրությամբ, ի տարբերություն վերը քննարկված պետությունների, նախատեսված է մաքսանենգության դրսևորումների առավել նեղ շրջանակ: Ավելին, դրանց շարքում տեղ չեն գտել թմրանյութերի, զենքի, պայթուցիկ նյութերի և հանրավտանգ այլ առարկաների մաքսանենգության (ներմուծման և արտահանման) դեպքերը, ինչը դժվար է արդարացված համարել:

Թմրամիջոցների մաքսանենգության համար բավականին խիստ պատասխանատվություն է սահմանված Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի քրեական օրենքներով:



Մասնավորապես, Մեծ Բրիտանիայում թմրամիջոցների ապօրինի շրջանառության (այդ թվում՝ դրանց մաքսանենգության) համար ֆիզիկական և իրավաբանական անձանց պատասխանատվությունը սահմանվում է օրենսդրական հետևյալ երկու հատուկ ակտերում՝ «Թմրամիջոցները չարաշահելու մասին» 1971 թ. և «Թմրամիջոցների մասին» 2005 թ. օրենքներով: Բացի այդ, թմրամիջոցների մաքսանենգության համար քրեական պատասխանատվություն և դրանց վերաբերյալ գործերով դատավարական համապատասխան ընթացակարգեր սահմանող որոշ նորմեր նախատեսված են տվյալ երկրի մի շարք այլ օրենսդրական ակտերով՝ «Մաքսատան և ակցիզների մասին» 1979 թ., «Ոստիկանության և քրեական գործերով ապացույցների մասին» 1984 թ., «Քրեական արդարադատության մասին» 1993 թ., «Թմրամիջոցների ապօրինի առևտրի մասին» 1994 թ. օրենքներով և այլն:

Այսպես, «Մաքսատան և ակցիզների մասին» օրենքի հոդվածներ 50-ի և 68-ի համաձայն՝ ընդհուպ մինչև ցմահ բանտարկության և անսահմանափակ դրամական տուգանքի են ենթակա «A» դասի, իսկ մինչև 14 տարի բանտարկության և/կամ անսահմանափակ դրամական տուգանքի՝ «B» դասի թմրամիջոցների ապօրինի ներմուծման կամ արտահանման մեջ մեղավոր ճանաչված անձինք:<sup>1</sup>

Ամերիկայի Միացյալ Նահանգներում թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության (այդ թվում՝ դրանց մաքսանենգության) համար քրեական պատասխանատվություն սահմանող հիմնական օրենսդրական ակտերը «ԱՄՆ օրենքների հավաքածուի» բաժիններ 18-ով և 21-ով նախատեսված՝ «Հսկողության տակ գտնվող նյութերի մասին» 1970 թ., «Թմրամոլությունից բուժման մասին» 1974 թ., «Հոգեմետ նյութերի մասին» 1978 թ. և «Թմրամիջոցների փոխադրման կանխարգելման մասին» 1994 թ. օրենքներն են: Մասնավորապես, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց պրեկուրսորների կամ համարժեքների մաքսանենգության (ապօրինի ներմուծման կամ արտահանման) համար քրեական պատասխանատվություն է սահմանված «ԱՄՆ օրենքների հավաքածուի» բաժին 18-ի

---

<sup>1</sup> Sté u նաև՝ **Савчишкина О. Г., Степанов Г. И.**, Зарубежное уголовное законодательство об ответственности за контрабанду наркотических средств, психотропных веществ или их аналогов // Вестник Челябинского государственного университета, 2013, № 17 (308), էջ 77:

§ 924-ով և բաժին 21-ի § 333-ով: Դրանցից վերջինի պարագայում մինչև 10 տարի ժամկետով ազատազրկում և մինչև 250 հազար ԱՄՆ դոլլարի չափով դրամական տուգանք է նախատեսված քննարկվող առարկաների ապօրինի ներմուծման կամ արտահանման համար: «ԱՄՆ օրենքների հավաքածուի» բաժին 18-ի § 924-ի պարագայում օրենսդիրը սահմանափակվել է պատժի միայն նվազագույն սահմանների նախատեսմամբ այն դեպքերի կապակցությամբ, երբ նույն արարքները կատարվել են հրազենի օգտագործմամբ: Ընդ որում, տվյալ դեպքում տարբերակված մոտեցում է ցուցաբերվել՝ կախված հրազենի օգտագործման աստիճանից: Մասնավորապես, եթե հանցավորի մոտ պարզապես առկա է եղել հրազեն, որը չի գործադրվել, ազատազրկման նվազագույն ժամկետը 5 տարին է, եթե այն միտումնավոր ցուցադրվել է՝ 7 տարին, իսկ եթե նպատակային նշանակությամբ գործադրվել է՝ 10 տարին:<sup>1</sup>

Այսպիսով, ԱՄՆ օրենսդիրն առավել վտանգավոր է համարում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց պրեկուրսորների կամ համարժեքների մաքսանենգությունը, որը կատարվել է հրազենի գործադրմամբ, ինչը լիովին արդարացված է: Մինևնույն ժամանակ, դժվար է համաձայնել այն մոտեցմանը, որ զենքի այլ տեսակների կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրման պարագայում, ըստ էության, մաքսանենգությունը չի համարվում ծանրացնող հանգամանքներում կատարված:

Մաքսանենգ եղանակով կատարվող հանցանքների հետ կապված առավել մանրամասն իրավակարգավորումներ և դրանց համար պատասխանատվության բավականին խիստ միջոցներ են նախատեսված Չինաստանի և Թուրքիայի քրեական օրենսդրություններով: Այս առումով բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նշված երկրների օրենսդիրների մոտեցման նման խստությունը նախ և առաջ պայմանավորված է կրոնական առանձնահատկությունների՝ բուդդայականության և իսլամի գաղափարական հիմքերի ազդեցությամբ: Բանն այն է, որ կրոնական վերոհիշյալ ուղղությունների ներկայացուցիչները հատկապես անհանդուրժող են թմրանյութեր գործածողների և տարածողների, ինչպես նաև արժեքավոր կենդա-

---

<sup>1</sup> St' u նաև՝ **Козочкин И. Д.**, Уголовное право США. СПб.: Юрид. центр Пресс, 2007, էջ 308:

նինների և նրանցից պատրաստված արտադրանքի ապօրինի շրջանառություն իրականացնողների նկատմամբ վերջիններիս համարելով անհավատներ և խստորեն դատապարտելով ընդհուպ մինչև ֆիզիկական ոչնչացման: Ընդ որում, նշված երկրների օրենսդիրների վերաբերմունքն այլ առարկաների մաքսանենգությանը նույնպես բավականին խիստ է:<sup>1</sup>

Այսպես, Չինաստանի քրեական օրենսգրքի<sup>2</sup> հոդված 151-ի 1-ին մասը պատասխանատվություն է սահմանում զենքի, ռազմամթերքի, ատոմային նյութերի կամ կեղծ արժույթի (այդ թվում՝ արտարժույթի) մաքսանենգության համար, որը պատժվում է ազատազրկմամբ՝ 7 տարին զերազանցող ժամկետով, և դրամական տուգանքով կամ գույքի բռնագրավմամբ, իսկ նույն արարքը մեղմացուցիչ հանգամանքներում կատարելը՝ ազատազրկմամբ՝ 3-7 տարի ժամկետով, և դրամական տուգանքով: Փաստորեն, տվյալ երկրի քրեական օրենսդրությամբ զենքի, ռազմամթերքի, ատոմային նյութերի և կեղծ արժույթի մաքսանենգության դեպքերը հավասարեցված են, ինչը, մեր կարծիքով, արդարացված չէ:

Նշված հոդվածի 2-րդ մասն առավել մեղմ պատասխանատվություն է սահմանում երկրի տարածքից արտահանումն արգելված մշակութային արժեքների, ոսկու, արծաթի և այլ թանկարժեք մետաղների, ինչպես նաև արժեքավոր կենդանիների ու նրանցից պատրաստված արտադրանքի մաքսանենգության համար: Տվյալ արարքը պատժվում է ազատազրկմամբ՝ 5 տարին զերազանցող ժամկետով, և դրամական տուգանքով, իսկ նույն արարքը մեղմացուցիչ հանգամանքներում կատարելը՝ ազատազրկմամբ՝ մինչև 5 տարի ժամկետով, և դրամական տուգանքով:

Հատկանշական է, որ Չինաստանի քր. օր.-ը բավականին խիստ պատասխանատվություն է նախատեսում նաև երկրի տարածքից արտահանումն արգելված յուրահատուկ բույսերի մաքսանենգության համար: Մասնավորապես, դրա հոդված 151-ի 3-րդ մասի համաձայն՝ նշված առարկաների մաքսանենգությունը պատժվում է դրամական տուգանքով կամ ազատազրկմամբ՝ մինչև 5 տարի ժամկե-

---

<sup>1</sup> Տե՛ս նաև՝ **Прохоров Л. А., Скачко А. В.**, Правовые модели противодействия контрабанде: опыт зарубежного законоотворчества // Общество и право, 2013, № 2 (44), էջ 75:

<sup>2</sup> Տե՛ս Уголовный кодекс Китайской Народной Республики, СПб., 2001:

տով, և տուգանքով, իսկ նույն արարքը ծանրացուցիչ հանգամանքներում կատարելը՝ ազատազրկմամբ՝ 5 տարին գերազանցող ժամկետով, և տուգանքով: Միննույն ժամանակ, նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տվյալ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված արարքներն առանձնապես ծանրացնող հանգամանքներում կատարելը՝ պատժվում է անժամկետ ազատազրկմամբ կամ մահապատժով՝ գույքի բռնագրավմամբ:

Չինաստանի քր. օր.-ի հոդված 152-ը պատասխանատվություն է սահմանում պոռնկագրական բնույթի նյութերի տարածման կամ դրանից նյութական օգուտ ստանալու նպատակով կատարված մաքսանենգության համար: Այս արարքը պատժվում է ազատազրկմամբ՝ 3-10 տարի ժամկետով, և տուգանքով: Նույն արարքը ծանրացուցիչ հանգամանքներում կատարելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ 10 տարին գերազանցող ժամկետով, կամ անժամկետ ազատազրկմամբ և գույքի բռնագրավմամբ, իսկ մեղմացուցիչ հանգամանքներում կատարելը՝ մինչև 3 տարի ժամկետով՝ ազատազրկմամբ կամ կարճաժամկետ կալանքով կամ հսկողության հանձնելով, ինչպես նաև տուգանքով:

Չինաստանի քր. օր.-ի հոդված 347-ը պատասխանատվություն է սահմանում թմրանյութերի մաքսանենգության, վաճառքի, փոխադրման կամ արտադրության համար, անկախ չափերից: Մասնավորապես՝ տվյալ հանցանքի հասարակ տեսակը պատժվում է մինչև 3 տարի ժամկետով՝ ազատազրկմամբ կամ կարճաժամկետ կալանքով կամ հսկողության հանձնելով, ինչպես նաև տուգանքով, իսկ ծանրացնող հանգամանքներում կատարվածը՝ ազատազրկմամբ՝ 3-7 տարի ժամկետով, և տուգանքով: Նույն արարքները առավել ծանրացնող հանգամանքներում կատարելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ 15 տարի ժամկետով, կամ անժամկետ ազատազրկմամբ կամ մահապատժով՝ գույքի բռնագրավմամբ: Նման ծանրացնող հանգամանքներ են համարվում՝

1) 1000 գրամից ավելի քանակով ափիոնի կամ 50 գրամից ավելի քանակով հերոինի կամ մեթիլամֆետամինի կամ խոշոր չափերով այլ թմրանյութերի մաքսանենգությունը, վաճառքը, փոխադրումը կամ արտադրությունը,

2) թմրանյութերի մաքսանենգությամբ, վաճառքով, փոխադրմամբ կամ արտադրությամբ զբաղվող հանցավոր խումբը ղեկավարելը,

3) թմրանյութերի մաքսանենգության, վաճառքի, փոխադրման կամ արտադրության զինված ապահովումն իրականացնելը,

4) մաքսային հսկողություն, ձերբակալում կամ կալանավորում իրականացնողին բռնությամբ զուգորդված դիմադրությունն ցուցաբերելը,

5) թմրանյութերի միջազգային առևտրին մասնակցելը,

6) թմրանյութերի մաքսանենգությանը, վաճառքին, փոխադրմանը կամ արտադրությանն անչափահասներին հակելը կամ այդ գործընթացներում նրանց օգտագործելը:

Ուշագրավ է, որ Չինաստանի քր. օր.-ով պատասխանատվություն է նախատեսված նաև ցանկացած տեսակի այլ առարկաների մաքսանենգության համար: Մասնավորապես, դրա հոդված 153-ի համաձայն՝ «Այլ ապրանքների և առարկաների մաքսանենգությունը, բացառությամբ սույն օրենսգրքի 151-րդ, 152-րդ և 347-րդ հոդվածներով նախատեսվածների, ուղեկցող հանգամանքների ծանրությամբ պայմանավորված՝ հանգեցնում է հետևյալ պատիժների կիրառմանը...»:

Հարկ է նշել, որ Չինաստանի քր. օր.-ով վերոհիշյալ բոլոր դեպքերում դրամական տուգանքի ձևով պատասխանատվություն է սահմանված նաև մաքսանենգությանը մասնակցող կազմակերպությունների (**իրավաբանական անձանց**) համար, իսկ դրանց ղեկավարները ենթակա են պատասխանատվության համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակներում:

Թուրքիայի օրենսդիրը հատուկ ուշադրություն է դարձրել երկրի տարածք կեղծ փողեր, թմրանյութեր և անպարկեշտ բնույթի առարկաներ ներմուծելն ու երկրից դրանք արտահանելը քրեականացնելու և դրա համար խիստ պատասխանատվություն սահմանելու անհրաժեշտությանը:<sup>1</sup> Այդ առումով, նախ, քրեականացվել են դրամավարկային հարաբերությունների դեմ ոտնձգող հետևյալ արարքները

---

<sup>1</sup> Ст' u Уголовный кодекс Турции, СПб., 2003:

1) երկրի տարածք կեղծ փողեր, ազգային ոսկյա զարդեր ներմուծելը, որը պատժվում է 3-12 տարի ժամկետով ազատազրկմամբ և խոշոր դրամական տուգանքով՝ 1 հազարից 10 հազար թուրքական լիրայի չափով (Թուրքիայի քր. օր.-ի հոդված 316),

2) երկրի տարածք վճարային կեղծ այլ փաստաթղթեր (արժեթղթեր, կտրոններ և այլն) ներմուծելը, որը պատժվում է 1-6 տարի ժամկետով ազատազրկմամբ և դրամական տուգանքով՝ 5 հարյուրից 5 հազար թուրքական լիրայի չափով (Թուրքիայի քր. օր.-ի հոդված 322):

Բացի դրանից, տվյալ երկրի քր. օր.-ի Հատուկ մասում նախատեսված են թմրամիջոցների մաքսանենգության համար պատասխանատվություն սահմանող մի շարք նորմեր: Այսպես, հոդված 403-ի համաձայն՝ երկրի տարածք առանց համապատասխան թույլտվության կամ օրենքով սահմանված այլ պայմանները խախտելով՝ թմրանյութեր ներմուծելը պատժվում է 10-20 տարի ժամկետով ազատազրկմամբ և խոշոր դրամական տուգանքով՝ թմրանյութի յուրաքանչյուր գրամի համար 500 հազար թուրքական լիրայի չափով: Նույն հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է սահմանում երկրի տարածքից թմրանյութեր ապօրինի արտահանելու համար, որը, ի տարբերություն ներմուծելու, ավելի մեղմ է պատժվում՝ 6-12 տարի ժամկետով ազատազրկմամբ և դրամական տուգանքով՝ թմրանյութի յուրաքանչյուր գրամի համար 50 հազար թուրքական լիրայի չափով:

Ուշագրավ է, որ քննարկվող երկրի օրենսդիրը մանրամասն իրավակարգավորման է ենթարկել նաև թմրանյութերի մաքսանենգության համար քրեական պատասխանատվության տարբերակումը: Մասնավորապես, Թուրքիայի քր. օր.-ով նախատեսված են մի շարք որակյալ հանցակազմեր, որոնք պայմանավորված են հետևյալ հանգամանքներով՝

1) հանցագործության առարկայով (հոդված 403-ի 6-րդ մասի համաձայն՝ նախատեսված պատիժը կրկնապատկվում է, եթե երկրի տարածք ներմուծվում կամ արտահանվում են հերոին, կոկաին, մորֆին կամ հաշիշ),

2) հանցագործության կազմակերպվածությամբ (հոդված 403-ի 7-րդ մասի համաձայն՝ նախատեսված պատիժը նույնպես կրկնա-

պատկվում է, եթե նշված հանցանքները կատարվում են հանցավոր կազմակերպության անդամների կողմից),

3) հանցանքը կատարելու պարբերականությամբ, երբ հանցավոր նման գործունեությունը դառնում է եկամտուտի հիմնական աղբյուր, արհեստ (հոդված 403-ի 8-րդ մասի համաձայն՝ նման դեպքերում նախատեսված պատիժն ավելանում է 1/3-ով),

4) անչափահասներին կամ հոգեկան խանգարման հետևանքով իրենց արարքների բնույթն ու նշանակությունը գիտակցելու ունակությունից զրկված անձանց օգտագործելու հանգամանքով (հոդված 403-ի 9-րդ մասի համաձայն՝ նման դեպքերում նախատեսված պատիժն ավելանում է 1/6-ով),

5) երկրի տարածք թմրանյութեր ներմուծելու կամ դրանք երկրից արտահանելու նպատակով հանցավոր կազմակերպություն ստեղծելու կամ դրա գործունեությունը ղեկավարելու հանգամանքով (հոդված 403-ի 10-րդ մասի համաձայն՝ նման հանցավոր կազմակերպություն ստեղծողները կամ այն ղեկավարողները, եթե նրանք անմիջականորեն չեն մասնակցում վերոհիշյալ արարքների կատարմանը, պատժվում են ազատազրկմամբ՝ 5-10 տարի ժամկետով):

Հարկ է նշել նաև, որ Թուրքիայի քր. օր.-ի հոդված 426-ը պատասխանատվություն է սահմանում երկրի տարածք անպարկեշտ բնույթի տարատեսակ առարկաներ ներմուծելու կամ դրանք երկրից արտահանելու համար: Մասնավորապես, նման արարքները պատժվում են բավականին խիստ տուգանքով՝ 2 միլիոնից 10 միլիոն թուրքական լիրայի չափով:

Այսպիսով, Թուրքիայի քրեական օրենսդրությամբ նախատեսված են երկրի տարածք կեղծ փողեր կամ վճարային այլ միջոցներ, թմրանյութեր և անպարկեշտ բնույթի առարկաներ ներմուծելն ու երկրից դրանք արտահանելը, ինչի համար սահմանված են բավականին խիստ պատիժներ: Ընդ որում, թմրանյութերի ներմուծելն ավելի խիստ է պատժվում, քան արտահանելը: Բացի այդ, տարբերակված է թմրանյութերի մաքսանենգության հետ կապված հանցագործությունների համար պատասխանատվությունը, ինչի հիմքում դրված են հանցագործության առարկայի առանձնահատկությունները, հանցավոր գործունեության կազմակերպվածությունը, հանցանքը կատարելու պարբերականությունը, ինչպես նաև անչափահասներին և հոգեկան խանգարման հետևանքով իրենց արարքների

բնույթն ու նշանակությունը գիտակցելու ունակությունից զրկված անձանց օգտագործելու հանգամանքը:

Ի տարբերություն Թուրքիայի, Իրանի Իսլամական Հանրապետության քրեական օրենսդրությամբ պատասխանատվություն է սահմանված մաքսանենգության շատ ավելի նեղ շրջանակ կազմող դրսևորումների համար: Մասնավորապես, տվյալ երկրի «Իսլամական քրեական պատիժների մասին» օրենքը<sup>1</sup> պատասխանատվություն է նախատեսում երկրի տարածք մաքսանենգ ճանապարհով հետևյալ առարկաների ներմուծելու համար՝

1) ազգային կամ օտարերկրյա ոսկյա կամ արծաթյա մետաղադրամների, որը պատժվում է բանտարկությամբ՝ 1-10 տարի ժամկետով (հոդված 518),

2) ազգային կամ օտարերկրյա ոչ թանկարժեք մետաղադրամների, որը պատժվում է բանտարկությամբ՝ 1-3 տարի ժամկետով (հոդված 520),

3) երկրի իշխանության բարձրագույն մարմինների կեղծված որոշումների, կնիքների կամ դատարանների վճիռների (հոդվածներ 525 և 526):

Միևնույն ժամանակ, վերոհիշյալ առարկաների մաքսանենգ ճանապարհով արտահանումը ԻԻՀ օրենսդրությամբ քրեականացված չէ, ինչը, մեր կարծիքով, դժվար է արդարացված համարել:

Մաքսանենգության համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերն առավել շատ ընդհանրություններ ունեն նախկին ԽՍՀՄ պետություններում: Բանն այն է, որ դրանց մեծ մասի քրեական օրենքների հիմքում դրվել է ԱՊՀ անդամ պետությունների Մոդելային քրեական օրենսգիրքը, որում նախանշված կարգավորումներին համապատասխան, մի շարք երկրներում մաքսանենգությունը քրեականացվել է կա՛մ տվյալ արարքի համար պատասխանատվություն նախատեսող մեկ հոդվածով, կա՛մ երկու ինքնուրույն հանցակազմերով, որոնցից մեկը պատասխանատվություն է սահմանում, այսպես կոչված, տնտեսական մաքսանենգության, մյուսը՝ այն առարկաների մաքսանենգության համար, որոնք հանված են շրջանառությունից կամ որոնց շրջանառությունը սահմանա-

---

<sup>1</sup> Ст'и Закон об исламских уголовных наказаниях Исламской Республики Иран, СПб., 2008:



փակված է, կա՛մ երկուսից ավել հողվածներով, որոնցում առավել հստակեցված են քննարկվող հանցագործության օբյեկտներն ու առարկաները: Այս առումով հատուկ ուշադրության են արժանի Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների քրեական օրենսգրքերի համապատասխան դրույթները:

Այսպես, Ղազախստանի քր. օր.-ի<sup>1</sup> հողված 234-ը, որը նախատեսված է «Տնտեսական գործունեության ոլորտում կատարվող քրեական իրավախախտումներ» վերտառությամբ 8-րդ գլխում, պատասխանատվություն է սահմանում տնտեսական մաքսանենգության համար: Նույն օրենքի հողված 286-ը պատասխանատվություն է սահմանում այն առարկաների մաքսանենգության համար, որոնք հանված են շրջանառությունից կամ որոնց շրջանառությունը սահմանափակված է: Վերջինս նախատեսված է Ղազախստանի քր. օր.-ի «Հասարակական անվտանգության և հասարակական կարգի դեմ ուղղված քրեական իրավախախտումներ» վերտառությամբ 10-րդ գլխում:

Նման սահմանազատումը, ըստ էության, գլխավորապես պայմանավորված է քննարկվող հանցագործությունների առարկաներով: Մասնավորապես, Ղազախստանի քրեական օրենսգրքի հողված 234-ով նախատեսված հանցագործության առարկան են համարվում ապրանքները կամ այլ առարկաները (այդ թվում՝ որոնց տեղափոխումը մաքսային սահմանով արգելված է կամ սահմանափակված, բացառությամբ հողված 286-ում նշվածների), որոնց կապակցությամբ սահմանված են մաքսային սահմանով տեղափոխելու հատուկ կանոններ: Տվյալ հողվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական մաքսանենգություն է համարվում նշված ապրանքները կամ առարկաները Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով տեղափոխելն առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով կամ մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելու կամ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելու կամ ոչ իր անվամբ հայտարարագրելու միջոցով, եթե դրանք կատարվել են խոշոր չափերով: Այս արարքի համար՝ որպես պատիժ, նախատեսված է տուգանքը՝ ամսական հաշվարկային ցուցանիշների մինչև 500-պատիկի չափով,

---

<sup>1</sup> Տե՛ս <http://online.zakon.kz/>:

կամ ուղղիչ աշխատանքներով՝ նույն չափով, կամ հանրային աշխատանքներով՝ մինչև 300 ժամ ժամկետով, կամ կալանքով՝ մինչև 90 օր ժամկետով, և գույքի բռնագրավմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված են տնտեսական մաքսանենգության առավել վտանգավոր տեսակները: Մասնավորապես, նույն արարքները, որոնք կատարվել են՝ 1) կրկին անգամ, 2) պաշտոնեական դիրքն օգտագործելով, 3) սահմանապահի կամ մաքսային հսկողություն իրականացնողի նկատմամբ բռնություն գործադրելով, 4) առանձնապես խոշոր չափերով կամ 5) խմբի կողմից նախնական համաձայնությամբ: Նման արարքները պատժվում են տուգանքով՝ ամսական հաշվարկային ցուցանիշների մինչև 3000-պատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ նույն չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մինչև 3 տարի ժամկետով, կամ ազատագրվմամբ՝ նույն ժամկետով, և գույքի բռնագրավմամբ:

Ղազախստանի քր. օր.-ի հոդված 234-ի 3-րդ մասով նախատեսված են տնտեսական մաքսանենգության առավել ծանրացնող հանգամանքները: Դրանք են նույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝ 1) պետական գործառույթներ իրականացնելու համար լիազորված կամ նրան հավասարեցված անձի կամ պաշտոնատար կամ պետական պատասխանատու պաշտոն զբաղեցնող անձի կողմից, եթե դա գուցորդվել է նրանց կողմից իրենց պաշտոնեական դիրքն օգտագործելով կամ 2) հանցավոր խմբի (**կազմակերպված խմբի** – Գ.Մ.) կողմից: Նշված արարքները պատժվում են ազատագրվմամբ՝ 3-8 տարի ժամկետով և գույքի բռնագրավմամբ, իսկ 1-ին կետով նախատեսված դեպքերում՝ նաև որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից ցմահ զրկելով:

Ղազախստանի քր. օր.-ի հոդված 286-ով նախատեսված հանցագործության առարկան են՝ թմրամիջոցները, հոգեմետ նյութերը, դրանց համարժեքները, պրեկուրսորները, խիստ ներգործող, թունավոր, թունավորող, ռադիոակտիվ նյութերը, ռադիոակտիվ թափոնները կամ միջուկային նյութերը, պայթուցիկ նյութերը, սպառազինությունը, ռազմական տեխնիկան, պայթուցիկ սարքերը, հրազենը կամ ռազմամթերքը, միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային ռչնչացման զենքի այլ տեսակները, զանգվածային ռչնչացման զենքի ստեղծման համար օգտագործվող նյութերը, սար-

քավորումները կամ բաղադրիչները: Տվյալ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական պատասխանատվություն է սահմանվում նշված առարկաները Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով կամ մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելու կամ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելու կամ ոչ իր անվամբ հայտարարագրելու միջոցով տեղափոխելու, ինչպես նաև Ղազախստանի Հանրապետության պետական սահմանով ապօրինի տեղափոխելու համար: Այս հանցագործությունը պատժվում է տուգանքով՝ ամսական հաշվարկային ցուցանիշների մինչև 5000-պատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ նույն չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մինչև 5 տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ նույն ժամկետով, և գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա: Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված են մաքսանենգության տվյալ տեսակի ծանրացնող հանգամանքները, որոնք նույնն են, ինչ որ հոդված 234-ի 2-րդ մասում նախատեսվածները, սակայն ավելի խիստ են պատժվում: Մասնավորապես, դրանց համար նախատեսված է ազատազրկումը՝ 7-12 տարի ժամկետով, և գույքի բռնագրավումը:

Միննույն ժամանակ, առավել ծանրացնող հանգամանքների առումով առկա են ավելի էական տարբերություններ: Մասնավորապես, Ղազախստանի քր. օր.-ի հոդված 286-ի 3-րդ մասով առավել խիստ պատասխանատվություն է սահմանվում նույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված միայն այն արարքների համար, որոնք կատարվել են հանցավոր խմբի կողմից: Տվյալ հանցագործությունը պատժվում է ազատազրկմամբ՝ 10-15 տարի ժամկետով, և գույքի բռնագրավմամբ: Նույն հոդվածի 4-րդ մասը նախատեսում է մաքսանենգության քննարկվող տեսակի ամենավտանգավոր տեսակը: Մասնավորապես, այն առավել խիստ (ազատազրկում՝ 15-20 տարի ժամկետով, և գույքի բռնագրավում) պատասխանատվություն է սահմանում նույն հոդվածի 1-ին, 2-րդ կամ 3-րդ մասերով նախատեսված և թմրամիջոցների, հոգեմետ նյութերի կամ դրանց համարժեքների հետ կապված արարքների համար, որոնք կատարվել են առանձնապես խոշոր չափերով:

Այսպիսով, Ղազախստանի քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածների վերլուծությունը հանգեցնում է հետևյալ եզ-

րակացություններին: Նախ, այս երկրում մաքսանենգությունը քրեականացվել է տվյալ արարքի համար պատասխանատվություն նախատեսող երկու ինքնուրույն հանցակազմերով, որոնցից մեկը պատասխանատվություն է սահմանում տնտեսական մաքսանենգության, մյուսը՝ այն առարկաների մաքսանենգության համար, որոնք հանված են շրջանառությունից կամ որոնց շրջանառությունը սահմանափակված է: Բացի այդ, վերջինս բոլոր դեպքերում ավելի խիստ է պատժվում, քան տնտեսական մաքսանենգության դրսևորումները:

Բելառուսի քրեական օրենսգրքում<sup>1</sup> մաքսանենգությունը նախատեսված է մեկ հոդվածով: Մասնավորապես, դրա հոդված 228-ը, որը տեղ է գտել «Տնտեսական գործունեության իրականացման կարգի դեմ ուղղված հանցագործություններ» վերտառությամբ 25-րդ գլխում, պատասխանատվություն է սահմանում թե՛ տնտեսական (1-ին մաս) և թե՛ այն առարկաների մաքսանենգության համար, որոնք հանված են շրջանառությունից կամ որոնց շրջանառությունը սահմանափակված է (2-րդ մաս): Նշված հոդվածի 1-ին մասով նախատեսված սանկցիան՝ որպես պատիժ, սահմանում է տուգանքը կամ ազատության սահմանափակումը՝ մինչև 5 տարի ժամկետով, կամ ազատազրկումը՝ նույն ժամկետով: Նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված սանկցիան, բնականաբար, ավելի խիստ է՝ ազատազրկում՝ 3-7 տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

Բելառուսի քր. օր. -ի հոդված 228-ի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված են մաքսանենգության քննարկվող դրսևորումների ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքները: Այսպես, նշված հոդվածի 3-րդ մասը սահմանում է 5-10 տարի ժամկետով ազատազրկում՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, մաքսանենգության համար, որը կատարվել է խմբի կողմից նախնական համաձայնությամբ կամ նախկինում կատարված մաքսանենգության համար դատվածություն ունեցող անձի կողմից կամ պաշտոնատար անձի կողմից՝ իր ծառայողական լիազորությունների օգտագործմամբ, կամ մաքսային հսկողություն իրականացնող անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ առանձնապես վտանգավոր թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կապակցությամբ: Նույն

---

<sup>1</sup> Տե՛ս <http://www.etalonline.by/>:

հողվածի 4-րդ մասով՝ որպես մաքսանենգության ամենավտանգավոր տեսակ, նախատեսված է տվյալ հողվածի 1-ին, 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքի կատարումը կազմակերպված խմբի կողմից: Նշված արարքը պատժվում է ազատազրկմամբ՝ 7-12 տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

Միաժամանակ Բելառուսի քր. օր.-ը պատասխանատվություն է սահմանում նաև մաքսանենգության բնույթ կրող այլ դրսևորումների համար: Մասնավորապես, դրա հողված 228<sup>1</sup>-ով՝ որպես հանցագործություն, նախատեսված է մաքսային սահմանով ապրանքների ապօրինի տեղափոխումը: Նշված հողվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է սահմանում Մաքսային միության սահմանով ապրանքները դրա համար օրենսդրությամբ սահմանված վայրերը շրջանցելով կամ ոչ աշխատանքային ժամերին տեղափոխելու համար, որը կատարվել է նման արարքի համար վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո մեկ տարվա ընթացքում, եթե բացակայում են հողված 228-ով նախատեսված հանցագործության հատկանիշները: Ընդ որում, տվյալ արարքի համար ևս բավականին խիստ պատիժ է սահմանված՝ տուգանքը կամ կալանքը կամ մինչև 2 տարի ժամկետով ազատության սահմանափակումը կամ նույն ժամկետով ազատազրկումը: Փաստորեն, Բելառուսի քր. օր.-ում, վարչական պրեյուդիցիայի հիմքով՝ որպես հանցագործություն է նախատեսված նաև վարչական իրավախախտում հանդիսացող մաքսանենգության կրկնակիությունը, որպիսի մոտեցումը խորթ է Եվրասիական տնտեսական միության անդամ մյուս պետություններին, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար:

Ղրղզստանի Հանրապետության քրեական օրենսգրքում<sup>1</sup> ևս մաքսանենգությունը նախատեսված է մեկ հողվածով: Մասնավորապես, դրա հողված 204-ը, որը տեղ է գտել «Տնտեսական գործունեության ոլորտում կատարվող հանցագործություններ» վերտառությամբ 22-րդ գլխում, պատասխանատվություն է սահմանում թե՛ տնտեսական (1-ին մաս) և թե՛ այն առարկաների մաքսանենգության համար, որոնք հանված են շրջանառությունից կամ որոնց շրջանառությունը սահմանափակված է (2-րդ մաս): Ընդ որում, ինչպես և Բելառուսի քր. օր.-ի հողված 228-ում, Ղրղզստանի քրեական օրենսգրքի

<sup>1</sup> Տե՛ս <http://online.adviser.kg/>:

քննարկվող հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված են մաքսանենգության վերոհիշյալ դրսևորումների ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքները, որոնք գրեթե նույնանում են:

Դրանց սանկցիաներում, սակայն, առկա են որոշ տարբերություններ: Մասնավորապես, Ղրղզստանի քր. օր.-ի հոդված 204-ի 1-ին մասով նախատեսված հանցանքը պատժվում է տուգանքով՝ հաշվարկային ցուցանիշների 1000-ապատիկից 5000-ապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ մինչև 2 տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մինչև 3 տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մինչև 2 տարի ժամկետով: Նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքը պատժվում է ազատազրկմամբ՝ 3-7 տարի ժամկետով և գույքի բռնագրավմամբ: Ղրղզստանի քր. օր.-ի հոդված 204-ի 3-րդ մասով նախատեսված հանցանքը պատժվում է ազատազրկմամբ՝ 5-10 տարի ժամկետով և գույքի բռնագրավմամբ, իսկ 4-րդ մասով նախատեսված հանցանքը՝ ազատազրկմամբ՝ 7-12 տարի ժամկետով և գույքի բռնագրավմամբ:

Առանձին ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Ղրղզստանի քր. օր.-ի հոդված 204-ում նախատեսված ծանոթագրության համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքն առաջին անգամ կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա կամովին վճարում է սահմանված մաքսային վճարները՝ ներառյալ տույժերն ու տուգանքները, հայտարարագրում է մաքսանենգության առարկա հանդիսացած ապրանքները, և եթե նրա փաստացի կատարած արարքը չի պարունակում այլ հանցակազմի հատկանիշներ: Տվյալ մոտեցումը, մեր կարծիքով, լիովին արդարացված է և այն նպատակահարմար է կիրառել նաև ՀՀ քր. օր.-ում:

Ռուսաստանի Դաշնությունն այն պետությունների շարքում է, որտեղ մաքսանենգությունը քրեականացված է քր. օր.-ի երկուսից ավել հոդվածներով, որոնցում առավել հստակեցված են քննարկվող հանցագործության օբյեկտներն ու առարկաները: Մասնավորապես, քննարկվող հանցավոր դրսևորումները նախատեսված են ՌԴ քր. օր.-ի<sup>1</sup> տարբեր գլուխներում, որոնք ներառում են՝ տնտեսական գործունեության ոլորտում կատարվող հանցանքները (գլուխ 22), հասա-

---

<sup>1</sup> Տե՛ս <http://lawlibrary.ru/>:

րակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները (գլուխ 24) և բնակչության առողջության ու հասարակական բարոյականության դեմ ուղղված հանցագործությունները (գլուխ 25):

Տնտեսական գործունեության ոլորտում կատարվող հանցանքների շարքում նախատեսված է մաքսանենգության երկու ինքնուրույն դրսևորում՝ 1) կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների մաքսանենգությունը (ՌԴ քր. օր.-ի հոդված 200.1) և 2) ակոնիոլային խմիչքների ու (կամ) ծխախոտի մաքսանենգությունը (ՌԴ քր. օր.-ի հոդված 200.2):

ՌԴ քր. օր.-ի հոդված 200.1-ի համաձայն՝ քրեորեն պատժելի է Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով կանխիկ դրամական միջոցներ և (կամ) դրամական գործիքներ ապօրինի տեղափոխելը, որը կատարվել է խոշոր չափերով: Նույն հոդվածի Ծանոթագրություն 1-ին համապատասխան, տվյալ արարքը համարվում է խոշոր չափերով կատարված, եթե ապօրինի տեղափոխված կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների գումարը գերազանցում է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսդրությամբ սահմանված՝ առանց հայտարարագրման փոխադրելու համար նախատեսված թույլատրելի չափի կրկնապատիկը: Բացի այդ, նշված հոդվածի Ծանոթագրություն 5-ին համապատասխան, քննարկվող իմաստով դրամական գործիքներ են համարվում ճանապարհային կամ բանկային չեկերը, վեկսելները, ինչպես նաև փաստաթղթավորված արժեթղթերը, որոնք հավաստում են էմիտենտի (պարտապանի) որոշակի դրամական միջոցներ վճարելու պարտավորությունը, և որոնցում նշված չէ կոնկրետ պարտատերը: Ընդ որում, օրենքով նախատեսված չեն մաքսանենգության առարկաների ապօրինի տեղափոխման եղանակները, ինչը, օրենքը ավելորդ չճանրաբեռնելու տեսանկյունից, կարծում ենք, առավել արդարացված է: Տվյալ արարքը պատժվում է տուգանքով՝ ապօրինի տեղափոխված կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների արժեքի 3-ապատիկից 10-ապատիկի կամ դատապարտյալի մինչև 2 տարվա աշխատավարձի կամ այլ եկամտի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մինչև 2 տարի ժամկետով, կամ հարկադիր աշխատանքներով՝ մինչև 2 տարի ժամկետով:

Նույն արարքի ծանրացնող հանգամանքները նախատեսված են քննարկվող հոդվածի 2-րդ մասով, որն առավել խիստ պատասխա-

նատվություն է սահմանում կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների մաքսանենգության համար, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով կամ խմբի կողմից: Ընդ որում, այդ հոդվածի Ծանոթագրություն 2-ին համապատասխան, տվյալ արարքը համարվում է առանձնապես խոշոր չափերով կատարված, եթե ապօրինի տեղափոխված կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների գումարը գերազանցում է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսդրությամբ սահմանված՝ առանց հայտարարագրման փոխադրելու համար նախատեսված թույլատրելի չափի հնգապատիկը: Տվյալ դեպքում արդեն արարքը պատժվում է տուգանքով՝ ապօրինի տեղափոխված կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների արժեքի 10-ապատիկից 15-ապատիկի կամ դատապարտյալի մինչև 3 տարվա աշխատավարձի կամ այլ եկամտի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մինչև 4 տարի ժամկետով, կամ հարկադիր աշխատանքներով՝ մինչև 4 տարի ժամկետով:

Ուշագրավ է, որ ՌԴ քր. օր.-ի հոդված 200.1-ի Ծանոթագրություն 3-ի համաձայն, ապօրինի տեղափոխված կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների արժեքի չափերը հաշվարկելիս դրանց ընդհանուր գումարից հանվում է այն մասը, որը Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով թույլատրվում է առանց հայտարարագրման փոխադրել: Այս մոտեցումը ևս, կարծում ենք, լիովին արդարացված է: Միաժամանակ, սակայն, տվյալ ձևակերպմամբ անտեսվել է այն մասը, որը հայտարարագրվել է, ինչի հետ դժվար է համաձայնել:

Բացի դրանից, նույն հոդվածի Ծանոթագրություն 4-ով նախատեսված է իրախուսական նորմ: Մասնավորապես, տվյալ հոդվածում նշված կանխիկ դրամական միջոցները և (կամ) դրամական գործիքները կամովին հանձնած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա արարքն այլ հանցակազմ չի պարունակում: Ընդ որում, հանձնումը կամովին չի համարվում, եթե նշված առարկաները հայտնաբերվել են մաքսային հսկողություն իրականացնելիս, այդ ընթացքում դրանք առգրավելիս կամ դրանց հայտնաբերման ու առգրավման նպատակով քննչական գործողություններ իրականացնելիս: Տվյալ մոտեցումը նույնպես, մեր կարծիքով, լիովին արդարացված է:



ՌԴ քր. օր.-ի հոդված 200.2-ի համաձայն՝ քրեորեն պատժելի է Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով ակտիվացիային խմբիչներ և (կամ) ծխախոտ ապօրինի տեղափոխելը, որը կատարվել է խոշոր չափերով: Նույն հոդվածի Ծանոթագրություն 1-ին համապատասխան, տվյալ հոդվածով նախատեսված արարքները համարվում են խոշոր չափերով կատարված, եթե նշված առարկաների արժեքը գերազանցում է 250 հազար ռուսական ռուբլին: Միաժամանակ, տվյալ հոդվածի Ծանոթագրություն 2-ին համապատասխան, դրանց արժեքի չափը հաշվարկելիս դրանց ընդհանուր գումարից հանվում է այն մասը, որը հայտարարագրվել է կամ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով թույլատրվում է առանց հայտարարագրման փոխադրել:

Այս հանցագործությունը պատժվում է տուգանքով՝ 300 հազարից 1 միլիոն ռուսական ռուբլու կամ դատապարտյալի 1-3 տարվա աշխատավարձի կամ այլ եկամտի չափով, կամ հարկադիր աշխատանքներով՝ մինչև 5 տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ նույն ժամկետով: Դժվար չէ նկատել, որ տվյալ դեպքում տուգանքի չափերի որոշման եղանակները մասամբ տարբերվում են հոդված 200.1-ով նախատեսվածներից: Մինչդեռ, կարծում ենք, առավել նպատակահարմար կլիներ այս դեպքում ևս տուգանքի չափերը կապել ապօրինի տեղափոխվող առարկաների արժեքի հետ:

Քննարկվող հանցագործության ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքները նախատեսված են ՌԴ քր. օր.-ի հոդված 200.2-ի 2-րդ և 3-րդ մասերում: Այսպես, նշված հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է սահմանում նույն արարքի համար, որը կատարվել է խմբի կողմից նախնական համաձայնությամբ կամ պաշտոնատար անձի կողմից՝ իր պաշտոնական դիրքն օգտագործելով: Այս արարքների համար՝ դրպես պատիժ, նախատեսված է ազատազրկմամբ՝ 3-7 տարի ժամկետով, և տուգանքով՝ մինչև 1 միլիոն ռուսական ռուբլու կամ դատապարտյալի մինչև 3 տարվա աշխատավարձի կամ այլ եկամտի չափով, կամ առանց դրա: Տվյալ դեպքում դժվար է համաձայնել այն մոտեցմանը, որ, ի տարբերություն հոդված 200.1-ի 2-րդ մասի, անտեսվել են այնպիսի ծանրացնող հանգամանքներ, ինչպիսիք են նույն արարքը խմբի կողմից առանց նախնական համաձայնության կամ առանձնապես խոշոր չափերով

կատարելը: Միաժամանակ, կարծում ենք, հողված 200.1-ում նա՝ որպես ծանրացնող հանգամանք, նպատակահարմար կլիներ նախատեսել նույն արարքը պաշտոնատար անձի կողմից կատարելը:

ՌԴ քր. օր.-ի հողված 200.2-ի 3-րդ մասով, ինչպես արդեն նշվել է, նախատեսված է քննարկվող հանցագործության ամենավտանգավոր տեսակը՝ նույն արարքը կազմակերպված խմբի կողմից կատարելը: Տվյալ հանցագործությունը պատժվում է ազատազրկմամբ՝ 7-12 տարի ժամկետով, և տուգանքով՝ մինչև 2 միլիոն ռուսական ռուբլու կամ դատապարտյալի մինչև 5 տարվա աշխատավարձի կամ այլ եկամտի չափով, կամ առանց դրա և ազատության սահմանափակմամբ՝ մինչև 2 տարի ժամկետով, կամ առանց դրա: Ընդ որում, նման առավել ծանրացնող հանգամանք, կարծում ենք, նպատակահարմար կլիներ նախատեսել նաև հողված 200.1-ում:

ՌԴ քր. օր.-ի՝ «Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ» վերտառությամբ գլուխ 24-ում նախատեսված հողված 226.1-ը պատասխանատվություն է սահմանում ուժեղ ներգործող, թունավոր, թունավորող, պայթուցիկ կամ ռադիոակտիվ նյութերի, ռադիացիայի աղբյուրների, միջուկային հումքի, հրազենի կամ դրա հիմնական մասերի, պայթուցիկ սարքերի, ռազմամթերքի, զանգվածային ոչնչացման զենքի, դրա առաքման միջոցների, այլ սպառազինության, ռազմական այլ տեխնիկայի կամ զանգվածային ոչնչացման զենքի, դրա առաքման միջոցների, այլ սպառազինության, ռազմական այլ տեխնիկայի ստեղծման համար օգտագործվող նյութերի կամ սարքավորումների, ինչպես նաև ռազմավարական կարևոր նշանակության ապրանքների կամ ռեսուրսների կամ մշակութային արժեքների կամ առանձնակի արժեք ունեցող վայրի կենդանիների կամ ջրային կենսաբանական ռեսուրսների մաքսանենգության համար: Նշված հողվածի 1-ին մասի համաձայն՝ այդ առարկաների մաքսանենգություն է համարվում դրանք Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով կամ միության անդամ այլ պետությունների հետ Ռուսաստանի Դաշնության պետական սահմանով խոշոր չափերով (բացառությամբ առանձնակի արժեք ունեցող վայրի կենդանիների կամ ջրային կենսաբանական ռեսուրսների) ապօրինի տեղափոխելը: Տվյալ արարքը պատժվում է ազատազրկմամբ 3-7 տարի ժամկետով, և տուգանքով՝ մինչև 1 միլիոն ռուսական ռուբլու կամ դատապարտյալի մինչև 5 տարվա աշխա-

տավարձի կամ այլ եկամտի չափով, կամ առանց դրա և ազատության սահմանափակմամբ՝ մինչև 1 տարի ժամկետով, կամ առանց դրա: Այս առումով, սակայն, դժվար է համաձայնել մշակութային արժեքները և առանձնակի արժեք ունեցող վայրի կենդանիները քննարկվող հանցագործության առարկաների շարքին դասելուն: Բանն այն է, որ դրանք, ըստ մեզ, կապված են ոչ թե հասարակական անվտանգությանը, այլ տնտեսության ոլորտին առնչվող հասարակական հարաբերությունների հետ:

Մինևույն ժամանակ, մաքսանենգության քննարկվող տեսակի ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքները նախատեսված են ՌԴ քր. օր.-ի հոդված 226.1-ի 2-րդ և 3-րդ մասերում: Այսպես, նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն, առավել վտանգավոր է համարվում նույն արարքը, որը կատարվել է պաշտոնատար անձի կողմից՝ իր պաշտոնական դիրքն օգտագործելով, կամ մաքսային կամ սահմանապահ հսկողություն իրականացնողի նկատմամբ բռնություն գործադրելով: Տվյալ հանցագործությունը պատժվում է ազատազրկմամբ՝ 5-10 տարի ժամկետով, և տուգանքով՝ մինչև 1 միլիոն ռուսական ռուբլու կամ դատապարտյալի մինչև 5 տարվա աշխատավարձի կամ այլ եկամտի չափով, կամ առանց դրա և ազատության սահմանափակմամբ՝ մինչև 1,5 տարի ժամկետով, կամ առանց դրա: Միաժամանակ հարկ է նշել, որ այս պարագայում ևս անարդարացիորեն անտեսվել են ծանրացնող այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են արարքը առանց նախնական համաձայնության խմբի կողմից և առանձնապես խոշոր չափերով կատարելը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն, մաքսանենգության քննարկվող դրսևորման ամենավտանգավոր տեսակը վերոհիշյալ արարքները կազմակերպված խմբի կողմից կատարելն է, որը պատժվում է ազատազրկմամբ՝ 7-12 տարի ժամկետով, և տուգանքով՝ մինչև 1 միլիոն ռուսական ռուբլու կամ դատապարտյալի մինչև 5 տարվա աշխատավարձի կամ այլ եկամտի չափով, կամ առանց դրա և ազատության սահմանափակմամբ՝ մինչև 2 տարի ժամկետով, կամ առանց դրա:

ՌԴ քր. օր.-ի հոդված 226.1-ի ծանոթագրություններում բացահայտվում են քննարկվող հանցագործության առումով ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող ապրանքների և ռեսուրսների ու առանձնակի արժեք ունեցող վայրի կենդանիների և ջրային կեն-

սաբանական ռեսուրսների, ինչպես նաև դրանց չափերի հասկացությունները:

ՌԴ քր. օր.-ի՝ «Բնակչության առողջության և հասարակական բարոյականության դեմ ուղղված հանցագործություններ» վերտառությամբ գլուխ 25-ում նախատեսված հոդված 229.1-ը պատասխանատվություն է սահմանում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց պրեկուրսորների կամ անալոգների, թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր կամ դրանց պրեկուրսորներ պարունակող բույսերի կամ դրանց մասերի, ինչպես նաև հատուկ հսկողության տակ գտնվող և թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի պատրաստման համար օգտագործվող գործիքների կամ սարքավորումների մաքսանենգության համար: Նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այդ առարկաների մաքսանենգություն է համարվում դրանք Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով կամ միության անդամ այլ պետությունների հետ Ռուսաստանի Դաշնության պետական սահմանով ապօրինի տեղափոխելը (անկախ չափերից): Տվյալ արարքը պատժվում է ազատազրկմամբ՝ 3-7 տարի ժամկետով, և տուգանքով՝ մինչև 1 միլիոն ռուսական ռուբլու կամ դատապարտյալի մինչև 5 տարվա աշխատավարձի կամ այլ եկամտի չափով, կամ առանց դրա և ազատության սահմանափակմամբ՝ մինչև 1 տարի ժամկետով, կամ առանց դրա: Փաստորեն, տվյալ հանցագործության համար սահմանված պատժատեսակներն ու պատժաչափերը նույնանում են հոդված 226.1-ով նախատեսվածների հետ, ինչը, կարծում ենք, լիովին տրամաբանական է և արդարացված:

Միննույն ժամանակ, մաքսանենգության քննարկվող տեսակի ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքները նախատեսված են ՌԴ քր. օր.-ի հոդված 229.1-ի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերում: Այսպես, նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն, առավել վտանգավոր է համարվում նույն արարքը, որը կատարվել է խմբի կողմից նախնական համաձայնությամբ, պաշտոնատար անձի կողմից՝ իր պաշտոնական դիրքն օգտագործելով, կամ զգալի չափերով: Տվյալ հանցագործությունը պատժվում է ազատազրկմամբ՝ 5-10 տարի ժամկետով, և տուգանքով՝ մինչև 1 միլիոն ռուսական ռուբլու կամ դատապարտյալի մինչև 5 տարվա աշխատավարձի կամ այլ եկամտի չափով, կամ առանց դրա և ազատության սահմանափակմամբ՝ մինչև 1,5 տարի ժամկետով, կամ առանց դրա:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն, մաքսանենգության քննարկվող դրսևորման առավել վտանգավոր տեսակն է վերոհիշյալ արարքները խոշոր չափերով կատարելը, որը պատժվում է ազատազրկմամբ՝ 10-20 տարի ժամկետով, և տուգանքով՝ մինչև 1 միլիոն ռուսական ռուբլու կամ դատապարտյալի մինչև 5 տարվա աշխատավարձի կամ այլ եկամտի չափով, կամ առանց դրա և ազատության սահմանափակմամբ՝ մինչև 2 տարի ժամկետով, կամ առանց դրա: Այս առումով, սակայն, մեր կարծիքով, սահմանված է ազատազրկման ձևով չափազանց խիստ պատիժ:

ՌԴ քր. օր.-ի հոդված 229.1-ի 4-րդ մասում նախատեսված են մաքսանենգության քննարկվող դրսևորման ամենավտանգավոր տեսակները՝ նույն արարքները կազմակերպված խմբի կողմից, առանձնապես խոշոր չափերով կամ մաքսային կամ սահմանապահ հսկողություն իրականացնողի նկատմամբ բռնություն գործադրելով կատարելը: Տվյալ հանցագործության սանկցիան ևս, կարծում ենք, չափազանց խիստ է և ոչ արդարացված: Մասնավորապես, նշված հանցագործությունը պատժվում է ազատազրկմամբ՝ 15-20 տարի ժամկետով, և տուգանքով՝ մինչև 1 միլիոն ռուսական ռուբլու կամ դատապարտյալի մինչև 5 տարվա աշխատավարձի կամ այլ եկամտի չափով, կամ առանց դրա և ազատության սահմանափակմամբ՝ մինչև 2 տարի ժամկետով, կամ առանց դրա, կամ ցմահ ազատազրկմամբ: Փաստորեն այս հանցագործությունն ավելի խիստ է պատժվում, քան ծանրացնող հանգամանքներում սպանությունը (ՌԴ քր. օր.-ի հոդված 105-ի 2-րդ մաս), ինչն անընդունելի է:

Այսպիսով, արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս հանգել հետևյալ հիմնական եզրակացություններին.

Եվրոպական Միության անդամ որոշ պետություններում (Ման-Մարինո, Հոլանդիա և այլն) մաքսանենգության համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերն ընդգրկում են տվյալ արարքի դրսևորումների բավականին լայն շրջանակ, իսկ մյուսներում (Գերմանիա, Շվեյցարիա, Ֆրանսիա և այլն) քրեորեն պատժելի են համարվում դրանց միայն առավել վտանգավոր տեսակները: Ընդ որում, ոչ բոլոր երկրների քրեական օրենքներն են պարունակում հատուկ նորմ, որը պատասխանատվություն է սահմանում տնտեսական մաքսանենգության համար: Մինևույն ժամա-

նակ, ԵՄ որոշ երկրներում (Գերմանիա, Լեհաստան, Շվեդիա և այլն) մաքսանենգության համար նախատեսված են չափազանց մեղմ, մյուսներում (Սան-Մարինո, Ֆրանսիա և այլն)՝ բավականին խիստ պատիժներ:

Մեծ Բրիտանիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների քրեական օրենքներով բավականին խիստ պատասխանատվություն է սահմանված թմրամիջոցների մաքսանենգության համար:

Մաքսանենգ եղանակով կատարվող հանցանքների հետ կապված առավել մանրամասն իրավակարգավորումներ և դրանց համար պատասխանատվության առավել խիստ միջոցներ են նախատեսված Չինաստանի և Թուրքիայի քրեական օրենսդրություններով: Նման խստությունը գլխավորապես պայմանավորված է կրոնական առանձնահատկությունների բուդդայականության և իսլամի գաղափարական հիմքերի ազդեցությամբ:

Մաքսանենգության համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերն առավել շատ ընդհանրություններ ունեն նախկին ԽՍՀՄ պետություններում: Ընդ որում, նշված երկրներում մաքսանենգությունը քրեականացվել է կա՛մ տվյալ արարքի համար պատասխանատվություն նախատեսող մեկ հոդվածով (օրինակ՝ Բելառուսի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում), կա՛մ երկու ինքնուրույն հանցակազմերով, որոնցից մեկը պատասխանատվություն է սահմանում, այսպես կոչված, տնտեսական մաքսանենգության, մյուսը՝ այն առարկաների մաքսանենգության համար, որոնք հանված են շրջանառությունից կամ որոնց շրջանառությունը սահմանափակված է (օրինակ՝ Ղազախստանի Հանրապետությունում), կա՛մ երկուսից ավել հոդվածներով, որոնցում առավել հստակեցված են քննարկվող հանցագործության օբյեկտներն ու առարկաները (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում):

*Гор Мирзоян*

*Аспирант кафедры уголовного права ЕГУ*

## **КОНТРАБАНДА ПО УГОЛОВНОМУ ЗАКОНОДАТЕЛЬСТВУ ЗАРУБЕЖНЫХ СТРАН**

В статье рассмотрены правовые модели противодействия контрабанде как важнейшего направления борьбы с преступностью. Кроме того, показаны особенности подхода к дифференциации уголовной ответственности за контрабандные преступления в законода-

тельстве зарубежных стран. Проведен также сравнительно-правовой анализ норм уголовного законодательства Республики Армения, Российской Федерации, Республики Беларусь, Республики Казахстан и Киргизской Республики, предусматривающих уголовную ответственность за контрабанду, определены расхождения и сделан вывод о необходимости унификации данных норм.

*Gor Mirzoyan*

*PHD Student of the YSU Chair of Criminal Law*

## **SMUGGLING UNDER THE CRIMINAL LEGISLATION OF FOREIGN COUNTRIES**

Legal models of counteraction to smuggling as the most important direction of fight against criminality are considered in the article presented. Besides, the features of approach to differentiation of criminal liability for smuggling crimes in the legislation of foreign countries are shown. The comparative- legal analysis of the norms of the criminal legislation of the Republic of Armenia, the Russian Federation, the Republic of Belarus, the Republic of Kazakhstan, and the Republic of Kyrgyzstan, which stipulate criminal responsibility for smuggling are conducted, discrepancies are revealed and conclusions on the need for unification of these rules are made .

**Բանալի բառեր՝** *քրեական օրենսդրություն, մաքսանենգություն, իրավական մոդել, իրավունքի համակարգեր, թմրանյութեր, քրեական պատասխանատվություն*

**Ключевые слова:** *уголовное законодательство, контрабанда, правовая модель, системы права, наркотики, уголовная ответственность*

**Key words:** *criminal legislation, smuggling, legal model, law systems, drugs, criminal liability.*